

17-21. ՀՈՎՈՒՆԵՐԳՈՒԹԻՒՆ ՍԸ

Ա

17. ԳԱՐՆԱՆ ՀԻԻՂԸ

Դաշտին գոգը՝ արահետի մը եզերք՝
 Հիւղակ մը կայ կանանչներով ողողուած.
 Իր առջեւէն կ'անցնի ամէն տըւարած,
 Ճնճողւկներուն կը կարկաջէ հոն խմբերգ,
 Ու տատրակներն ալ՝ ծիածան ուլերով՝
 Քմշոտ գիծ մը կը գըծեն շուրջն երագէ:
 Ու պորերը, խոշոր շարժուն շուշաններ՝
 Կ'երագեն մէջն աւազանին տաղին զով,
 Ուր ծորակին մեներգն անվերջ կը վագէ:
 Մասրենիներ, վարդենիներ, մորիներ
 Հոն, ձեռքձեռքի, դարձպար մըն են բոլորեր.
 Ծաղկանոյշներ, ապրիմմեռնիմ, մանիշակ՝
 Բուռ բուռ բերեր որմերուն տակ են ցաներ:
 Թաղարներէն մեխակի հոյլ մ'աչուըներ
 Կը ժպտերգեն հիւղին հրճուանքն անապակ:
 Օ՛հ, գաղջ աւիշն՝ որ չորս կողմէն կը պոռթկայ՝
 Ընծիւղներով, շաքիլներով անհամար.
 Օ՛հ, արեւոտ խայտա՛նքն արբուն աղջըկայ՝
 Որ կը զեղու բորբոք, արբշիռ ու յիմար,
 Կուրծքէն գարնան՝ որ թեւերովն իր բաղեղ՝
 Տարփո՛տ՝ հիւղին կը պլլուի, ու հեղեղ
 Կանանչով մը կու տայ համբոյրն իր դալար:

Բ

18. ՀԻԻՂԻՆ ԳԱՐՈՒՆԸ

Բերնիս քըսած էր բաժակը մեղրակաթ
 Համբոյրներու՝ նայադը ծով երագին.
 Ու չըլլքած դեռ ավիունքները ակատ
 Շրթունքներու՝ քունես ընդոստ արթնցայ:
 Ու գրկիս մէջ գըտայ առտուն լուսոռոգ.
 Առտուն, մանուկ՝ որ զերթ ծաղիկ կը ցնծայ՝
 Եւ հոգիին կը բերէ բոյրն իր նորոգ:
 Եւ ամէն կողմ երթալ ուզող զերթ մանուկ՝